



ԳԱՂՈՒԹԱՅԱՅ ԿՅԱՆՔ

ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

„ՈՒՒՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ Ի ՀԱՅԱՍՏԱՆ“ ԳՐԲԻ ՀԱՌԱՋԱՐԱՆԸ

Սույն րվի մայիս ամսում լույս տեսավ Գերաշնորհ Դերեհիկ Եպիսկոպոս Փռլատյանի «ՈՒՒՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ Ի ՀԱՅԱՍՏԱՆ» գեղատիպ և պատկերազարդ հատորը Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ հառաջարանով: Ինչպես հայտնի է, Դերեհիկ Սրբազանը Հայաստան էր եկել որպես ուխտավոր և ներկա էր եղել Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրությանն ու օծմանը: Այս գրքով Սրբազանը տալիս է իր տպավորությունները Հայաստանից: Ստորև տրվում է վերոհիշյալ գրքի համար ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ գրած հառաջարանը:

Էջմիածնի Եկեղեցական Ազգային ժողովը ամբողջ գրականություն է ստեղծել, ինչպես և սպասելի էր, Աշխարհի չորս կողմերից դեպի Հայրենիք և Էջմիածին գացող պատգամավորները նախ՝ ի պաշտոնն պետք է իրենց տեղեկագրերը պատրաստեին իրենց ուղարկող հասարակության համար և ապա՝ իրենց տպավորությունները հաղորդեին Սփյուռքի հայրենաբաղձ հատվածներին՝ հողավածների շարքով և գրքերով: Ուրախ ենք, որ Անթիլիասի Կաթողիկոսարանն էլ յուր բաժինն ունի այս աշխատությանը:

Հաճույքով կարդացինք նորընծա Դերեհիկ Եպիսկոպոսի այս գիրքը, հուսով ենք, հաճույքով պիտի կարդան և մյուս ընթերցողներն առհասարակ: Որովհետև սովորական ճանապարհորդական նկարագրություն չէ այն, այլ շատ հաճախ քնարական գեղունիքի և համապատասխան խորհրդածությունների մի ծաղկադաշտ, լինի այն ինքնաբերական և ներհայեցական, թե պատմական և սրբազան վայրերի տպավորության տակ: Ժանապարհորդական նկարագրություն լինելով հանդերձ, գիրքը առավելապես բանաստեղծական վերարտադրություն է ստացած տպավորությունների, երանգավորությամբ, հուզումով և երևակայության թռիչքներով ընդլուզված: Հեղինակն էլ յուր տեսածն ու լսածը, լեռներն ու դաշտերը, ծաղիկներն ու թռչունները, երիտասարդներն ու աղջիկները, պառավներն ու ծերունիները սովորա-

կան աչքով չէ, որ տեսնում է և նկարագրում, այլ կենդանի հուզումով և հայրենաբաղձ սրտով, որ առանձին հրապույր է տալիս գրվածքին:

Սակայն ուր պետք է, տալիս է և առարկայական նկարագրություններ, պատմական լուսարանող տեղեկություններ դեպքերի և այցելած վայրերի մասին, սահուն, գողտրիկ և կենդանի ոճով: Հեղինակը ինքը հետաքրքրվող և աշխույժ բնավորություն ունենալով, շարունակ հարց ու փորձի մեջ է, յուր ծանոթությունները ճշտելու կամ ընդարձակելու, երբեմն դիմելով և գրքերի օգնության, մեղվի նման ամեն ծաղկից հյութ քաղելով և յուր գիրքը դարձնելով հաճելի և ընթերցանությունը զբոսեցուցիչ:

Գիրքը բաժանված է իննը հատվածների, և յուրաքանչյուրը նոցանից յուր հատուկ հրապույրն ունի, և երբեմն նույնիսկ հուլիչ կտորներ, ինչպես «Առավոտ մը Էջմիածնի մեջ» այցը յուր ուսուցիչ Շահն Արքեպիսկոպոսի դամբարանին: Գեղեցիկ կերպով համագրել է և գաղափարի լուսավոր օղակներով իրար կապել ժողովի և ժողովականների կողմից արտահայտված մտայնությունն ու հոգին և այնքան ամփոփ և ցայտուն կերպով, որ հավատացած ենք, ընթերցողներն էլ պիտի համակվին նույն մտայնությամբ: Հեղինակի մեծ առավելություն է այս, որ պետք է շեշտվի: Նույնը կարող ենք ասել Ուխտաքննությունի Քի-

դարձ հատվածի մասին, որ ակնարկված առավելության վերա ավելանում է երբեմն և տեղին ՀՈՒՄՈՐԸ:

Վերջին երկու հատվածների մեջ հեղինակը խոսում է Պատմական թանգարանի, Մատենադարանի և թատրոնների մասին, որոնք հետաքրքրական կլինին և հաճելի, ինչպես պատմական և հինավուրց վայրերին տված այցելությունները: Զարմանալի է, որ չի խոսում թանգարանի նկարչական բաժնի մասին, որ մեր ներկա ստեղծագործության պարծանքն է:

Լեզուն հարուստ է, պատկերավոր և սահուն, ունի բազմաթիվ նորաստեղծ կամ ոչ շատ գործածելի բառեր և արտահայտության ձևեր, որ առանձին գեղեցկություն են տալիս հեղինակի գրության ոճին: Մեջ ենք բերում պատահաբար մի քանի երեսից օրինակներ ավելի հասկանալի դարձնելու համար մեր նկատողությունը:

Եր. 117, ա) «Իարձյալ սկսան հնչել մինառտանին հնամյա զանգակները լեռնասույզ զողանջներով»:

25 մայիս 1947 թ.

Անթիլիաս

ԳԵՂԵՑԻԿ ԺԵՍՔ ՄԸ

«Արև»-ը գրում է. —

Մեր ընթերցողները կհիշեն Վեհափառ Գարեգին Կաթողիկոսի Հայեպի Ս. Ք. Մանկանց եկեղեցիում մեջ (իր հոգեկրկնական հանգիստության առթիվ) խոսած հուշակալ փայլման ճառը, որ հրատարակվեցավ, «Արև»-ի մարտ 28-ի թիվին մեջ: Այդ ճառին վերջաբանի մեջ Վեհափառը կհայտարարեր թե ուներ հրատարակելի երեք երկասիրություն, յուրաքանչյուրը 1000 տպագրվալ էջոց, և կոչ կըներ, որ հայ մշակութին բարեկամ հայ անհատներ օգնեն իրեն առնոց տպագրության համար:

բ) «Այդ ժայռափոր հազարամյա ու խորհրդաշող կամաբներուն տակ, որ աղոթքի հիմեր հայրերը, համակվեցա անպելի վեհության զգացումով»:

գ) «Անոնք (ժողովուրդը) կձայնակցեն իկեղեցականներու և տիրացուներու երգեղողության, որ արձագանք կուտար Ազատ դեպի հովտին և լեռներուն մեջ»:

Եր. 118. «Բայց կհավատա Աստուծո նախախնամությանը բույր, լույս ու ժպիտ մանանայի (տպված է մամոնայի) հանգույն պիտի իջնեն մեր երկրի և ժողովուրդի վրա»: Այս խոսքերն է դրել մեր բերանում Գեղարդում խոսած քարոզի բովանդակությունը հիշած ժամանակ: Կարելի է նման միտք արտահայտել ենք, բայց ոչ այդպիսի գեղեցիկ պատկերավորությամբ:

Դերենիկ Եպիսկոպոսի այս գիրքը ոչ միայն օգտակար կլինի ընթերցողներին, այլ և վայելք կպատճառե, ինչպես գեղարվեստական մի վեպ, մանավանդ, որ զարդարված է բազմաթիվ պատկերներով:

Արդ, Մոսուլի հոգևոր հովիվ արժանապատիվ Տեր Մեսրոպ քհն. Օրջանյան նամակով մը կտեղեկացնե մեզի, թե Մոսուլի թաղականության մնայուն առննապետ տղաք. Գր. Աստարճյան կարդալով այդ ճառը, ինքնաբերաբար հանձն առած է հոգալ այդ երեք հսկա հատորներուն ծախսը և այդ իմաստով գրած է Վեհափառ Հայրապետին: Ծնորհավորության արժանի ժես մը, որ կրնա որպես հետևելի օրինակ ծառայել ուրիշ ազգայիններու:

Արվեստագետ Ա. ՖԵՏԿԱՃՅԱՆ

ԻՄ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅ ԱԶԳԻՆ

Բոլոր այն հայերին, որ կարող են և պիտի ուզեն արտահայտվիլ այսու հայտնածս որոշումիս մասին, կանխավ կհայտնեմ շնորհակալություն:

Աշխատավորս՝ անցած հոկտեմբերի առաջին օրը թևակոխած հասակիս 83-րդ տարին, դեռ այնքան խանդավառ եմ արվեստին սիրով, որքան և որպես որ էի 25—30 տարեկան եղածս ժամանակ:

Ինչքան էլ դեռ չեմ տեսներ օրերիս վախճանը, բայց և շատ հասկանալի է, որ երկարակեցության մոտավորապես սովորական տևողությունը տասնյակ տարիներով պիտի անցած մեկը, որպիսին ես եմ, չեմ կարող